ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի փետրվարի 18-20-ը Լեհաստանի Հանրապետություն (Վարշավա)

գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Հովհաննես Ազիզյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Գործուղման վայրը՝ ք. Վարշավա (Լեհաստանի Հանրապետություն)

   Գործուղման ժամկետները՝ 18.02.2018- 20.02.2018

4. **Հրավիրող կողմը**

   Լեհաստանի Հանրապետության ձեռնարկատիրության և տեխնոլոգիաների նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստին մասնակցելու նպատակով

6. **Քննարկված թեմաները**

   Նիստի ընթացքում քննարկվել են Հայաստանի և Լեհաստանի միջև առևտրատնտեսական, ներդրումային, էներգետիկայի, գյուղատնտեսության, բնապահպանության և այլ ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները և հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հայկական կողմը մասնավորապես ներկայացրել է արտահանելի տնտեսության ձևավորմանն ուղղված Հայաստանի կառավարության քայլերը: Հաշվի առնելով լեհական տնտեսության առանձնահատկությունները՝ որպես փոխգործակցության հնարավոր ոլորտներ, առանձնացվել են դեղագործությունը, ագրոբիզնեսը և վերականգնվող էներգետիկան:

Քննարկումների ընթացքում լեհական կողմը նշել է, որ դիտարկում է Հայաստանը որպես հարթակ՝ իրանական և եվրասիական շուկա մուտք գործելու համար՝ միևնույն ժամանակ պատրաստակամություն հայտնելով նման հարթակ հանդիսանալու հայկական ապրանքների՝ ԵՄ շուկա մուտք գործելու համար:

Նիստի ընթացքում անդրադարձ է եղել նաև զբոսաշրջության ոլորտին: Կողմերը նշել են, որ արձանագրվել է զբոսաշրջային այցելությունների երկկողմանի աճ: Մասնավորապես 2017 թվականին Լեհաստանից Հայաստան ներգնա այցելույթունների թիվն աճել է 40%-ով: Լեհական կողմն առաջարկել է կազմակերպել տուրօպերատորների և լրագրողների ճանաչողական այց Հայաստան: Նշվել է նաև, որ Լեհաստանի համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում միջտարածաշրջանային զբոսաշրջային արդյունքը, ինչին նպաստում է Երևան-Վարշավա ուղիղ կանոնավոր թռիչքի առկայությունը:

Նիստի շրջանակներում կայացել է B2G ձևաչափով գործարար համաժողով, որին մասնակցել են Լեհաստանի գործարար համայնքի 100-ից ավելի ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում ՀՀ պատվիրակության կողմից լեհ գործարարներին ներկայացվել են Հայաստանի ներդրումային գրավչության, ազատ տնտեսական գոտիների, զբոսաշրջության, էներգետիկայի, գյուղատնտեսության ոլորտների վերաբերյալ շնորհանդեսներ:

Համաժողովի շրջանակներում հայկական կողմը քննարկումներ է ունեցել Լեհաստանի զարգացման բանկի և Ներդրումների ընդլայնման ֆոնդի հետ: Արդյունքում վերջիններս պատրաստակամություն են հայտնել աջակցություն ցուցաբերել այն լեհական ընկերություններին, որոնք արտադրութուններ կհիմնեն Հայաստանում՝ տրամադրելով արտոնյալ ֆինանսական ռեսուրսներ և իրականացնելով համատեղ ներդրումներ:

Մի շարք լեհական ընկերությունների հետ քննարկվել են Հայաստանում ներդրումների հնարավորությունները, այդ թվում՝ դեղագործության, գինեգործության ոլորտում, նաև կենցաղային մաքրող միջոցների համատեղ արտադրության հնարավորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ նիստի արդյունքում ստորագրվել է նիստի Արձանագրությունը և ըստ ոլորտների սահմանվել են հետագա գործակցության ուղղությունները: Ստորագրվել է նաև էներգետիկայի ոլորտում մտադրությունների վերաբերյալ հուշագիր, որով լեհական ընկերությունը նախատեսում է ներդրումներ իրականացնել Հայաստանում, հողմային էներգիայի ոլորտում:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել համապատասխան միջոցներ ձեռնարկել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման համար:

9. Գործուղվողը

Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

06.03.2018թ.